

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐԲ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(Շառլ. տես Բազմավէպ, 1924 էջ 886)

ԼԳ.

ԱՆԴԵՂԱՅ ԺԱՆՏԱՆՑԻ

Սա ալ 61 թուահամարը կրող «Խըմբազիրը» տուփին մէջէն է և կը կրէ 5 թիւը:

Ձեռագիրն երկասիրութիւնն է Տփլիսի սեղի Ստեփաննոս Շէհերմանեան բժիշկին, զոր կենսագրած եմ 1911ին¹:

Նշանաւոր բժիշկ մ'էր, Տփլիսի ծնած, բայց ուսումը իտալիոյ մէջ առած և հոն վկայուած: 1791-1796 Պոլսոյ մէջ բժըշկութիւն ըրած է, և հոն է որ զրած է Անդեղայ ժանտախտին, ուրկէ շատ օրինակներ տեսած եմ, և հատ մ'ալ ես ինքս ունիմ:

*

Ս. Ղազարու այս ձեռագիրը ընդօրինակութիւն է Կ. Պոլսոյ Պէյօղլու թաղին մէջ կատարուած, և ունի իբրեւ երեսագիր՝ հետեւեալը:

ԱՆԴԵՂԱՅ ԺԱՆՏԱՆՑԻ

Յորում ձառի երկարագոյն զսահմանեկ նորա՝ և զամենայն պարագայից պատշաճն յոց նմա, ըստ մտաց վաղեմի և արդի երևելի թշկուաց ծաղկելոց յեկաղա և յիտալիա: Ժողովեալ մեծաւ զգոշութեամբ, և ծաղկաբոյ ընտրանքը բազմուսոյց ծանօտութեամբ զարդարեալ փորձառական պատմութեամբ շքեղացեալ՝ և փիլիսոփայական կրկտանօք յերիտեայ ի Բժիշկ Ստեփաննոսէ շէհրիմանեան Տփլիսեցոյ:

1. «ՅՈՐԵՆԻԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՔԱՆ» ՄԽԹԹԱՐԵԱՆՑ ՎԷՐՆԵԱՅ 1911, էջ 808.

Յամի փրկութեան մերոյ. 1791:

Եւ զաղախարհեալ ի Դպրի տնտոն վարձապետ Տիոնեան ֆեօդիսեց յամի 1844 ի Հնկո: Ի բարձ Պէյօղլու ի կոստանդիւնուպոլիս:

*

Սիրուն կազմով, բամբակեայ թուղթով, գեղեցիկ բոլորագիր ձեռագիր մ'է. մեծութիւնը 23 հարիւրորդամեղը, լայնութիւնը 18 հարիւրորդամեղը, իսկ թանձրութիւնը հազիւ կէս հարիւրորդամեղը: Կը բաղկանայ 27 թերթէ և ունի 52 էջ միասին գրութիւն, զրաբար, բաւական իրթին, որով կը յայտնուի Հեղինակին նախապէս Մխթարեանց ըով կրթուած բլաւը:

Սկիզբն ունի՝ «Բաւն առ քարեմիտ ընթերցող» վերնագրով Յառաջարանութիւն մը, որուն մէջ հիւանդութեանց և գեղերու մասին համառօտ ծանօթութիւն մը գծելով, անմիջապէս կ'անցնի իւր նիւթին:

Կը բաժնէ զայն եօթը գլխաւոր Պրակներու. առաջինին վերնագիրն է՝ Յաղագս ժանտախտի սեօթեկ, երկրորդին՝ Թէ գիճէ թէ ժանտախտն, չորրորդին՝ Յաղագս հշանաց ժանտախտն, հինգերորդին՝ Յաղագս շաւ և վատ եշանաց ժանտախտի, վեցերորդին՝ Յաղագս ստածման ժանտախտի, իսկ եօթներորդին՝ Յաղագս գգոշութեան, զոր ունիկ պահել առողջը ի ժամանակս ժանտամահոս:

*

Խղճամիտ աշխատութիւն մ'է. և ժանտախտի վրայ զրուած Հայ անդրանիկ գործն է այս, զոր բժիշկ Ստ. Շահրիմանեան շարագրած է հետեւելով Եւրոպական ընտրի հեղինակներու:

Ինքը Համալսարանական բժիշկ էր, զի ինքնակող բժիշկները ծաղրելով կը ծաղրէ, և իւր աշխատութեանը մէջ սեծ տեղ մը կու տայ իտալ. բժշկապետներու գաղափարներուն, որոնց հետ կը խառնէ սակայն իր ալ փորձառութեան արդիւնքը:

Ուրիշ առթի վերապահելով մասնաւոր ուսումնասիրութիւն մը այս Անդեղայ ժանտախտի մասին, առ այժմ սաչափն ըսեմ:

թէ Հայ բժշկական մատենագրութեան ու Պատմութեան մեծապէս պատուարեք Հատոր մ'է այս երկը. ինչպէս և Հեղինակը՝ Ստեփան Բժիշկ Շահրիմանեանց, որ ունի գրած Փյոթայն Հայաստանի անունով հոսահատոր խոշոր աշխատութիւն մ'ալ ձեռագիր, որ կը պահուի Թիւլլընկթօնի մատենադարանը:

Պոլսոյ մէջ բժշկած է նա մինչև 1796, յետոյ անցած է Կովկաս, ուր վախճանած է 1825ի ատենները:

Լ.Գ.

ՄԻԻԹԱՐԱՅ ՀԵՐԱՅԻՑ

ՋԵՐՄԱՆՑ ՄԻԻԹԱՐԱՌԻԹԻՒՆ

Երանօթ է մեզ, թէ Վենետկոյ Միւթարեան Միարանութիւնը տպագրած է արդէն այս գործը 1832ին, ուստի զայն նկարագրել աւելորդ աշխատութիւն մ'է զուցէ. սակայն հարկ անհրաժեշտ է յիշել այս ձեռագիրը, որ Հայ բժշկական պատմութեան համար խիստ յարգի է և արժանի իսկ անոր յատկական երախտագիտութեան, որովհետե՛ առանց այս ձեռագրին՝ անծանօթ և անյայտ պիտի մնար ի սպառ 12րդ Դարու նշանաւոր բժշկապետ Միւթար Հերային:

*

24 հարիւրորդամեզը մեծութեամբ, 17 հարիւրորդամեզը լայնութեամբ, և 1 հարիւրորդամեզը թանձրութեամբ, հաստ կողքերով լաւ կազմուած ու խնամով պահուած ձեռագիր մ'է, և կը կրէ՝ Միւթարեանց Մատենադարանին 1436 թուահամարը:

Թուղթը պարզ բամբակեայ, կը բաղկանայ 64 թերթէ, 128 էջ շեղագիր մաքուր, սիրուն գրութեամբ, զոր մեծանուն Հ. Արսէն Վ. Բագրատունիի անխոնջ ու բազմաբեղուն մատենները արձանագրած են:

Խնկելի՛ Արձանագրութիւն, որ երախտագիտական ամենաշեղծ գագուտներով

կը կապէ այսօր Հայ բժշկութիւնը Բագրատունիի անմեռ յիշատակին:

*

1824ին է. ընդ հուլ հարիւր տարի առաջ, որ Հ. Արսէն Բագրատունի Պարիսի Bibliothèque Nationaleի Հայերէն ձեռագիրներու շարքին մէջ կը պատահի Ջերմանց Միւթարառնիւնց գրչագրին, և կը նստի տնմիջապէս ընդօրինակել ամբողջը կատարեալ հաւատարմութեամբ:

Հ. Արսէն իւր ընդօրինակածին վրայ գրած է այսպէս.

ՄԻԻԹԱՐԱՅ ՀԵՐԱՅԻՑ

ԲԺՇԿԱՐԱՆ ՋԵՐՄԱՆՑ

Գտնալ յարքունի գրանոցին Փարիզոյ, ի գրչագրին 107. և ընդօրինակեալ ի նմին քաղաքի, յամի 1824:

Պարիսի այդ օրինակը մէկ հատիկն եղած է և ցարդ ալ մէկ հատիկն է Հայերէն ձեռագիրներու մէջ:

*

Հ. Արսէնի այս ընդօրինակութեան վերայէն կատարուած է 1832ի Տպագրութիւնը, և այդու խիստ կարեւոր ու երեւելի ճոխ էջ մը յայտնուած Հայ բժշկական պատմութեան:

Եւ այսպէս՝ Մեծն Հ. Արսէն Բագրատունի, որ Հայ լեզուի և Մատենագրութեան թանկագին ծառայութիւններ մատուցած է իւր հսկայ, հոյակապ աշխատութիւններով, Կ'օտտը նաև Հայ բժշկականութիւնը շքնաղագոյն մէկ երկով:

1824 և 1832 թուականները խիստ նշանաւոր են Հայ բժշկական պատմութեան մէջ, և անոնց հետ Հ. ԱՐՍԷՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻԻ անունն ալ ոսկեաւոր արձանագրուած:

ՏՕՐԹ. ՎԱՂԱՄ Յ. ԹՈՐԳՈՍԵԱՆ

Վեներսիկ — Ս. Ղազար

14 Յունուար 1923

(Շարունակելի)